## ՄԵՐՁԵՑՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՅԵՐԻ ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՀՄԱՅԱԿ Օ՛ԱՆՅԱՆ

Ժամանակակից հայերենի բայերի կազմում առանձնանում և զգալի տեղ են գրավում մերձեցման հարաբերություն արտահայտող բայերը։ Մերձեցման բայերը, որոնց քանակը հասնում է 60—70-ի, արտահայտում են ոչ միայն բանական էակի՝ մարդու ֆիզիկական և հոգեկան մերձեցումը, այլև բնության գոյակների, առարկաների մոտեցման, միացման իմաստները։ Մերձեցման բայերի գործողությունը, այսպիսով, տարածվում է ինչպես մարդկանց, այնպես էլ առարկաների ու երևույթների վրա։ Այդ բայերի միայն մի մասն է ֆիզիկական կապ կամ մերձեցում արտահայտում, իսկ մի շարք բայերի համար բնորոշ է նաև հոգեկան կապի կամ հոգևոր մերձեցման դրսևորումը։ Ըստ այդմ էլ նշված բայերի գործողությունը կարող է իրացվել կա՛մ միայն մարդու, կա՛մ էլ միաժամանակ թե՛ բանական էակի, թե՛ բնության գոյակների կողմից։ Ամենաընդհանուր ձևով մերձեցման հարաբերություն արտահայտող բայերի միջոցով ցույց են տրվում մարդու, այլև առարկաների ու երևույթների մերձեցման, մոտեցման տարբեր դրսևորումները։

Ըստ գործողության բնույթի, մերձեցման կամ մոտեցման հարաբերություն արտահայտող բայերի կազմում կարելի է առանձնացնել երկու ենթախումբ.

ա) միայն մարդուն բնորոշ գործողություն ցույց տվող բայեր

բ) և՛ մարդուն, և՛ բնության գոյակներին հատուկ գործողություն ցույց տվող բայեր։

Հիմնականում մարդուն բնորոշ գործողություն են դրսևորում ամուսնանալ, բարեկամանալ, դաշնակցել, եղբայրանալ, ընկերանալ, ընկերակցել, թշնամանալ, խնամիանալ, ծանոթանալ, կարեկցել, հաշտվել, համադրել, համագործակցել, հարազատանալ, մասնակցել, միախառնվել, միաձուլվել, միահյուսել, մտերմանալ, մոտիկանալ, նշանել, նշանվել, շաղկապել, ողջագուրվել, պաշտոնակցել, սիրահարվել, ցավակցել, ուղեկցել, օտարանալ և այլ բայեր։

Ե՛վ մարդուն, և՛ բնության գոյակներին հատուկ գործողության իմաստ են արտահայտում առնչվել, բախվել, դիպչել, զուգակցել, ընտելանալ, կպչել, հպվել, ձայնակցել, միանալ, միահյուսվել, մոտենալ, շփվել, փաթաթվել, քսվել և այլ բայեր։

Ըստ նշանակության մերձեցման բայերի կազմում կարելի է առանձնացնել հետևյալ խմբերը՝

1. բայեր, որոնք արտահայտում են դիպչելու, կպչելու և այլ իմաստներ՝ դիպչել, կպչել, հպվել, զարնվել, բախվել, շփվել, քսվել, փարվել և այլն։

2. Բայեր, որոնք արտահայտում են մոտենալու, մերձենալու, կապվելու, սեղմելու և այլ նշանակություններ՝ մոտենալ, մերձենալ, մոտիկանալ, կապել, կապվել, կառչել, կախվել, սեղմել, սեղմվել և այլն։

3. Բայեր, որոնք արտահայտում են միացնելու, կպցնելու, միավորելու և այլ իմաստներ՝ միանալ, միացնել, միախմբել, միահյուսել, միահյուսվել, միախառնել, միախառնվել, միավորել, միակցել, կցել, կցմցել, կպցնել, ձուլել, ձուլվել, միաձուլվել, շաղկապել, շաղկապվել, կապակցել, կապակցվել, շուլալվել, մերվել, շղթայել, շաղախվել և այլն։

4. Բայեր, որոնք արտահայտում են բարեկամություն, հարազատություն և այլ նշանակություններ՝ բարեկամանալ, թշնամանալ, ընկերանալ, եղբայրանալ, հարազատանալ, մտերմանալ, օտարանալ և այլն։

5. Բայեր, որոնք դրսևորում են մասնակցության, աջակցության, զուգակցման և այլ նշանակություններ՝ մասնակցել, աջակցել, աշխատակցել, դինակցել, թղթակցել, ուղեկցել, զուգակցել, զուգակցվել, համակցել, գործակցել, համագործակցել, փոխգործակցել, երգակցել, ձայնակցել, դաշնակցել և այլն։

6. Բայեր, որոնք արտահայտում են ամուսնություն, ծանոթություն, առընչություն և այլն՝ ամուսնանալ, նշանել, նշանվել, պսակվել, պսակել, ծանոթանալ, առնչվել, առնչակցվել և այլն։

7. Բայեր, որոնք դրսևորում են ցավակցություն, կարեկցանք և այլ նշանակություններ՝ ցավակցել, վշտակցել, սգակցել, կարեկցել և այլն։

8. Բայեր, որոնք արտահայտում են հաշտություն, ղգացմունքների որակ և այլ նշանակություններ՝ հաշտվել, հաշտեցնել, սիրահարվել և այլն։

Այս խմբերը խստորեն սահմանազատված չեն իրարից, մի բան, որ պայմանավորված է բուն նյութի թելադրմամբ հարաբերվող անդամների՝ միմյանց բացառելու օրենքը մինչև վերջ հետևողականորեն չկիրառելու հանգամանքով։ Ահա թե ինչու հնարավոր են որոշ բայերի տեղափոխություններ մի խմբից մյուսի մեջ, սակայն դա չի խաչընդոտում հարցի լուսաբանումը, քանի որ վեր են հանվում բոլոր բայերի խնդրառական առանձնահատկությունները, անկախ այն բանից, թե որ խմբի մեջ են ընդգրկված։

Ըստ խնդիրների ձևավորման, մոտեցման կամ մերձեցման բայերը բաժանվում են երեք խմբի.

ա) բայեր, որոնց համար առավել հատկանշական է հոլովական խնդրառությունը

բ) բայեր, որոնց համար առավել բնորոշ է կապական խնդրառությունը

գ) բայեր, որոնց լրացումները հավասարապես կարող են ստանալ թե՛ հոլովական, թե՛ կապական ձևավորում[1]։

Այս բաժանումը պայմանականության որոշ կնիք է կրում, քանի որ հոլովական խնդրառություն ցուցաբերող որոշ բայեր կարող են նաև կապական ձևավորմամբ լրացումներ ստանալ, հետևաբար և մտնել մյուս խմբի բայերի շարքը։ Այսինքն ընդգրկվել և՛ հոլովական, և՛ կապական խնդրառություն հանդես բերող բայերի մեջ։ Իսկ կապական խնդրառություն ունեցող մի քանի բայեր էլ կարող են ստանալ նաև հոլովական խնդրառություն՝ նույնպես մտնելով միաժամանակ և՛ հոլովական, և՛ կապական խնդրառություն ունեցող բայերի շարքը։ Ավելի հետևողական լինելու դեպքում թերևս կարելի է եզրակացնել, որ մերձեցման բայերի խնդիրները կարող են ձևավորվել թե՛ հոլովաձևերով և թե՛ կապով ու կապվող բառի զուգորդմամբ, այսինքն՝ առանձին ենթախմբերի չեն բաժանվում, սակայն այդպիսի մոտեցում չի ցուցաբերվում, քանի որ նկատի է առնվել այդ բայերի առավել հատկանշական խնդրառությունը։

Հոլովական խնդրառությունը առավել բնորոշ է կապել, կառչել, կպչել, կցել, կպցնել, դիպչել, հպել, հպվել, քսվել, քսքսվել, աջակցել, մասնակցել, փոխգործակցել, նվագակցել, ցավակցել, կախվել, շղթայել, խառնել, ձայնակցել, զարնվել, միանալ, մոտենալ, փարվել, կապակցվել, հյուսվել, ձուլել, շուլալվել, փաթաթել, մերձենալ, օտարանալ և այլ բայերի, որոնց մի մասը երբեմն կարող է ստանալ նաև կապային լրացում, որը այնքան տիպական ու հատկանշական չէ, որքան հոլովականը։ Մատնանշված բայերի խնդիր-լրացումները հիմնականում ձևավորվում են տրական, բացառական, հազվադեպ՝ նաև՝ հայցական, գործիական և ներգոյական հոլովներով։

Հոլովական խնդրառություն ունեցող բայերի մեջ առանձնանում են տրականով լրացում պահանջող բայերը, որոնց լրացումները հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն իրենց ձևավորման, այլև դրսևորած իմաստների ու հարաբերությունների տեսակետից։

---

1 Քննության է առնվում միայն առաջին և երկրորդ խմբերի մեջ ընդգրկված բայերի խնդրառությունը։

Տրականով լրացում են պահանջում՝

ա) այն բայերը, որոնք արտահայտում են դիպչելու, միանալու և այլ իմաստներ. օրինակ՝ դիպչել, դիպցնել, կպցնել, զարնվել, քսվել, միանալ, ձուլվել և այլն[2]։ Այսպես՝ «Արևի շողը դիպավ Լևոնի աչքերին (ՆՁՀ, էջ 3), «Ու մոտենալով բաժակը դիպցրեց յոթը լիքը բաժակներից յուրաքանչյուրին» (Գ, 1979, № 1, էջ 51)[3], «Մենք քսվում ենք ու քսվում ողջ աշխարհի սերունդներին» (ՊՍ, ԵԺ, հ. 1, էջ 78), «Գնում են ջրերը զրնգոցով, Զարնվում քարերին պարկած» (Գ, 1978, № 8, էջ 35), «Ռոմանտիկ պատկերացումները բախվում են իրականությանը և աղավաղում» (Գ, 1979, № 6, էջ 76), «Բայց հոգիս միացած է հոգուդ» (ՐԵԺ, հ. 3, էջ 113), «Ես ծիծաղեցի, ինքն էլ մի փոքր հետո միացավ ինձ» (Գ, 1978, № 8, էջ 73)։ Նշենք, որ վերոբերյալ բայերից մի երկուսի դեպքում լրացումը գործողությանը հպվում կամ շփվում է առարկայորեն[4]։ Այսպես՝ մոր ձեռքերը դիպան երեխայի ճակատին։ Հասմիկը օծանելիքը քսեց մազերին և այլն։ Բերված նախադասություններում բայերի լրացումները իրոք գործողության հետ հպվում կամ շփվում են առարկայորեն։

Դիպչել ճակատին կապակցության մեջ դիպչելու գործողության հետ հպվում, շփվում է ճակատ լրացումը առարկայորեն, առարկայական ձևով։ Նույն ձևով էլ քսել մազերին կապակցության մեջ քսելու գործողությանը առարկայորեն շփվում կամ հպվում է մազեր լրացումը և այլն։ Սակայն ոչ միշտ է լրացումը գործողության հետ հպվում, շփվում առարկայաբար։ Եթե լրացումը թանձրացական առարկա է կամ էլ գիտակցվում է իբրև այդպիսին, ապա լրացումը շփվում է գործողությանը առարկայարար, իսկ եթե վերացական է՝ նաև ոչ առարկայորեն։ Այսպես՝ «Դիպչում ես նրա արժանապատվությանը» (ՊՁԱԵ, էջ 387), «Ըստ իս, նույն կերպ անթույլատրելի է նաև ժողովրդական երկերին դիպչելը» (Գ, 1978, № 12, էջ 3)։ Այստեղ լրացումները առարկայարար չեն հպվում կամ շփվում գործողությանը, մի բան, որ պայմանավորված է լրացումների բնույթով, դրանք ոչ թե թանձրացական, այլ վերացական առարկա են։

բ) Մոտենալու, մերձենալու, միացնելու և այլ իմաստ արտահայտող մոտենալ, մոտիկանալ, մերձենալ, սեղմել, կցել, կցմցել և այլ բայեր[5], որոնց լրացումը հիմնականում հանգման հարաբերություն է արտահայտում, երբեմն էլ համատեղում է նաև այլ իմաստներ, հատկապես տեղի կամ տարածական։ Այսպես՝ «Տղամարդը մոտեցավ պատուհանին ու ծխախոտ վառեց» (ՍԳ, 1982, № 12, էջ 48), «Սեղմվեցի լուսամուտին» (Ն. տ., էջ 89), «Դու մեզ սովորեցրիր նոր տեսակետից մոտենալ իրերին, դեպքերին, կյանքին» (ԱԿՕ, հ. 2, էջ 194), «Հանդիսավոր կերպով մերձեցավ սուրբ տաճարի սյամին» (ՐԵԺ, հ. 7, էջ 558), «Գիտես կցմցել բառերը իրար» (ՍԳ, 1982, № 12, էջ 15)։

գ) Մասնակցություն, աջակցություն, զուգակցում, կարեկցանք և այլ իմաստ արտահայտող՝ մասնակցել, աջակցել, աշխատակցել, թղթակցել, նվագակցել, երգակցել, ձայնակցել, զինակցել, կարեկցել և այլ բայեր։

Հարկ է նկատել, որ վերոբերյալ բայերի մի մասի համար, իբրև լրացում, հիմնականում կիրառվում են իր ցույց տվող բառեր, իսկ որոշ բայերի դեպքում լրացման դերով կարող են կիրառվել թե՛ անձ, թե՛ իր մատնանշող բա-

---

2 Սրանցից մի երկուսը կարող են ստանալ նաև կապային լրացումներ, սակայն այդպիսիք չեն քննվում մյուս խմբի մեջ, նկատի առնելով այն, որ կապով ձևավորված լրացումները այնքան բնորոշ չեն այդ բայերի համար, որքան հոլովական լրացումները։

3 Դիպցնել, կպցնել բայերը, իբրև ներգործական սեռի բայեր, կարող են ստանալ նաև հայցականով արտահայտված լրացումներ, իսկ ըստ նշանակության՝ նաև գործիականով լրացում (կպցնել գիրքը սոսնձով)։

4 Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 218։

5 Կցել, կցմցել, սեղմել բայերը, իբրև ներգործական սեռի բայեր, կարող են ստանալ նաև հայցականով, ըստ նշանակության՝ նաև գործիականով լրացումներ [կցել, կցմցել, սեղմել (մի բան, մի բանով)]։

ռեր (աջակցել, ձայնակցել, զինակցել, կարեկցել, նվագակցել և այլն)։ Այստեղ որևէ սահմանափակություն չի նկատվում։ Այս բայերի՝ արական ձևավորման լրացումները հանգման հարաբերություն են դրսևորում՝ հիմնականում առանց լրացուցիչ նշանակությունների համատեղման. օրինակ՝ «Մասնակցել եմ նրանց զվարթ խրախճանքներին, ձայնակցել եմ նրանց հաղթանակի աղաղակներին» (ՀԹԵ, հ. 1, էջ 340), «Որը մշտապես աջակցել է տղայի և նրա ընկերների հեղափոխական ձեռնարկումներին» (Գ, 1978, № 9, էջ 60—61), «Երկար տարիներ նա աջակցել էր նրան. մասնակցել նրա ուրախության ու տխրության» (ՐԵԺ, հ. 3, էջ 430), «Աղջկան ձայնակցում էին տերևները, բզեզների հազարավոր ջութակները» (Գ, 1978, № 8, էջ 28), «Ձայնակցում են իմ, քո գրած երգին» (ՊՍ, ԵԺ, հ. 1, էջ 69)։ Գործածական են կարեկցել աղքատներին (հիվանդներին, ծերերին, թշվառներին), աշխատակցել (թղթակցել) ամսագրին (ռադիոյին, հեռուստատեսությանը, թերթերին), աջակցել ընկերոջը (բարեկամին, ամուսնուն, գործին, խնդրի լուծմանը), զինակցել հրամանատարին (արքային, զինվորին, թշնամուն) կապակցությունները, ուր սրական հոլովով ձևավորված լրացումները հանգման խնդրի գործառույթ են կատարում, առանց, սակայն, նրբերանգային որևէ նշանակություն դրսևորելու։

Մերձեցման բայերից մի քանիսը, իբրև բազմարժույթ բայեր, ստանում են մեկից ավելի հոլովներով ձևավորված լրացումներ։ Ընդ որում, հոլովներից մեկը հիմնականում տրականն է լինում, մյուսը՝ հայցականը, բացառականը, գործիականը կամ էլ ներգոյականը։ Այդ դեպքում առկա է կրկնակի կամ բազմակի խնդրառություն։

Մեկից ավելի հոլովներով խնդրառություն են հանդես բերում հատկապես կապել, կապվել, կառչել, կպչել, կպցնել, կցել, փակցնել, փաթաթվել, փարվել, օտարանալ և այլ բայեր, որոնցից մի քանիսի լրացումները կարող են ձևավորվել թե՛ տրական, թե՛ բացառական հոլովներով՝ դրսևորելով հանգման կամ տարածական (տեղի) հարաբերություն։ Այսպես՝ կապել ծառին (ծառից), կառչել մեկից, մի բանից (մեկին), կպչել օձիքին (օձիքից), փակցնել պատին՝ (պատից), կցել գնացքին (գնացքից) և այլն։ Վերջին կապակցությունը՝ կցել գնացքից, խիստ արհեստական է և հազվադեպ է հանդիպում, իսկ մյուսները սովորական կապակցություններ են և հարազատ հայերենի ոգուն։ Տրականով և բացառականով դրսևորված լրացումները համանիշություն են ցուցաբերում միմյանց նկատմամբ։

Մեկից ավելի հոլովներով ձևավորված լրացումներ պահանջող բայերից կապել-ը և կապվել-ը հիմնականում ստանում են տրականով, բացառականով և գործիականով ձևավորված լրացումներ, կպչել և կառչել բայերի լրացումները ձևավորվում են տրականով ու բացառականով, փաթաթվել և փարվել բայերի համար առավել բնորոշ է տրականով և գործիականով արտահայտված խնդրառությունը և այլն։

Կապել-ը, իբրև ներգործական բայ, ստանում է նաև հայցականով արտահայտված լրացում, որը իբրև կանոն կրող խնդրի պաշտոն է կատարում։ Կապել բայի՝ բացառականով ձևավորված լրացումը արտահայտում է հանգման հարաբերություն, երբեմն մաքուր, անխառն ձևով, երբեմն էլ տեղի նշանակության համատեղումով։ Այսպես՝ «Քո մայրը տարավ, քեզ կապեց այունից» (ՀՍ, ԵԺ, հ. 2, էջ 159), «Մի ողջ ժողովուրդ կապում օտարից» (ՊՍ, ԵԺ, հ. 4, էջ 64)։ Առաջին օրինակում լրացումը՝ այունից հանգման հարաբերության հետ համատեղում է տեղի իմաստ, երկրորդում իշխում է հանգման իմաստը, տեղի հարաբերությունը գրեթե բացակայում է։ Կապել բայի տրական հոլովով արտահայտված լրացումը հիմնականում հանգում է ցույց տալիս, որը երբեմն կարող է որոշ չափով համատեղել տեղի նշանակություն։ Այսպես՝ «Հազար թելերով կապում եմ ինձ կյանքին» (Գ, 1978, № 8, էջ 92)։ Այստեղ կապել բայը ստացել է երեք լրացում, արտահայտված հայցականով՝ ինձ, տրականով՝ կյանքին և գործիականով՝ թելերով։ Տրականով ձևավորված լրացումը հանգման հարաբերություն է արտահայտում, առանց տեղի նշանա-

կության համատեղման, գործիականով ձևավորվածը՝ միջոցի հարաբերություն։

Հետաքրքրություն է ներկայացնում կապվել բայի խնդրառությունը, մի բան, որ արտահայտվում է այդ բայի լրացման իմաստային նրբերանգներով և դրսևորման բազմազանությամբ։ Կապվել-ը կարող է ստանալ տրական, բացառական, գործիական, մասամբ նաև ներգոյական հոլովներով ձևավորված լրացումներ։ Ընդ որում, կապվել բայի լրացումը ավելի շատ տրական հոլովով է ձևավորվում, քան բացառականով։ Բացի դրանից, եթե տրականով հանգման հարաբերություն է արտահայտվում, ապա բացառականով կարող է դրսևորվել նաև տեղի իմաստ՝ հանգման նշանակության համատեղումով։ Այսպես՝ «Իրոք կապված ենք նրանց հիշատակներին» (ՊՍ, ԵԺ, հ. 4, էջ 316), «Կապված է հայ ժողովրդին ու Սովետական Հայաստանին» (Գ, 1979, № 1, էջ 90), «Այնքան եմ կապվել արտաղրամասի մարդկանց, որ կյանքս այլ կերպ չեմ պատկերացնում» (ՍՀ, 15. XII. 1981), «Այդ էվկալիպտի ծառից կապված էր նրանց վրանի ծայրը» (Գ, 1978, № 12, էջ 25)։ Բերված նախադասություններում տրական հոլովով ձևավորված լրացումները հանգման հարաբերություն են արտահայտում, բացառականով դրսևորված հանգման իմաստը համատեղում է տեղի նշանակության հետ։ Դեռ ավելին. այն ավելի շատ տեղի պարագայի պաշտոն է կատարում, քան հանգման խնդրի, թեև զգացվում է նաև հանգման իմաստը։

Կապվել բային բնորոշ է նաև գործիականով ձևավորված լրացում ստանալը։ Այդ դեպքում լրացումը կարող է դրսևորել թե՛ խնդրային, թե՛ պարագայական հարաբերություններ՝ պայմանավորված նախադասության կառուցվածքով ու իմաստով, հաղորդման նպատակով, լրացման բնույթով և այլ հանգամանքներով։ Օրինակ՝ «Բոլորի կյանքը կապված էր մի ահեղ ճակատագրով» (ԴԱԹ, հ. 1, էջ 445), «Ընկերության անդամները կապված էին նաև քաղաքական ընդհանուր հայացքներով» (ՊՍ, ԵԺ, հ. 5, էջ 8), «Դրանք կապված են համադասական հարաբերությամբ» (ՍԱ, ԺԳՀ, էջ 351)։ Այս վերջին նախադասության մեջ իշխում է պարագայական իմաստը։ Լրացումը ձևի պարագայի գործառույթ ունի, որի մեջ որոշ չափով համատեղվում է միջոցի խնդրի հարաբերություն, մյուս օրինակներում լրացումները խնդրային հարաբերություն են դրսևորում՝ կիրառվելով միջոցի խնդրի գործառույթով։

Երբեմն միևնույն կառույցի մեջ կապվել բայի պահանջով կիրառվում են տրականով ու գործիականով արտահայտված լրացումներ, որոնք համապատասխանաբար դրսևորում են հանգման և միջոցի (նաև ձևի) հարաբերություններ։ Այսպես՝ Հեքիաթային մտերմությամբ կապված են բնությանն ու մարդկանց (Գ, 1979, № 6, էջ 50)։

Թե ուղում ես երգդ լսեն՝
Ժամանակի շունչը դարձիր։—
Կապվիր նյարդով յուրաքանչյուր
Քո օրերին ու քո դարին (Գ, 1978, № 8, էջ 92)։

Բերված օրինակներից առաջինում գործիականով դրված լրացումը ավելի շատ պարագայական, քան խնդրային հարաբերություն է արտահայտում, ավելի ճիշտ՝ ձևի ու միջոցի հարաբերությունները համատեղված են նրա մեջ։ Երկրորդում հիմնականում իշխում է միջոցի խնդրի իմաստը, և լրացումը (նյարդով) ձևի հարաբերություն չի դրսևորում։

Կպչել, կպցնել, փակցնել բայերի լրացումները ևս դրսևորվում են մեկից ավելի հոլովաձևերով, մասնավորապես տրականով, բացառականով, երբեմն էլ՝ գործիականով։ Ընդ որում, տրականի ու բացառականի դեպքում իշխում է հանգման, իսկ գործիականով լրացումը արտահայտում է միջոցի (երբեմն էլ ձևի) հարաբերություն։ Գրական արևելահայերենում, իհարկե, ավելի տարածված է տրականով, քան բացառականով ու գործիականով խնդրառությունը։ Օրինակ՝ «Երիտասարդը արմունկով կպչելով մոռուքավորին, ներողություն խնդրեց ու կանգ առավ» (ԴՍԹ, հ. 1, էջ 14), «Քաթանե կոշտ արտահագուստը փայտացել, այնպես էր կպել մարմնին, ինչպես մարդու մատերն են ձմռանը կպչում

սառած մետաղին» (Գ, 1979, № 1, էջ 48), «Տղամարդը ծխախոտը կպցրեց վառիչին» (Գ, 1978, № 12, էջ 27)։

Գործածական են նաև կպչել մարմնից (ոտից, գլխից, մազերից), փակցնել պատից (տանիքից, պատշգամբից, առաստաղից) և այլ կապակցություններ, որոնցից կպչել բայի լրացումները հանգման հարաբերություն են արտահայտում, ուր թույլ զգացվում է նաև տեղի իմաստ, իսկ մյուսներում հավասարապես համատեղվում են հանգման ու տեղի նշանակությունները։ Ընդ որում, տեղի հարաբերության դրսևորմանը նպաստում է նաև լրացումների բնույթը. տանիք, պատշգամբ, առաստաղ բառերը ունեն տեղի կամ տարածական իմաստ, գիտակցվում են նաև իբրև տեղ։ Իսկ ոտ, գլուխ, մազ բառերի իմաստների մեջ տեղի կամ տարածական նշանակությունը չափազանց աղոտ կերպով է գիտակցվում։

Կպչել, կպցնել, փակցնել բայերի լրացումների ձևավորման որոշ մասնակցություն ունի նաև գործիական հոլովաձևը։ Այսպես՝ կպչել թևով (մարմնով), կպցնել զոդելով (սոսինձով, մեխով, մուրճով), փակցնել կոճգամով (սոսընձով, մեխով, ձեռքով)։

Տրականով ու բացառականով խնդրառություն է ցուցաբերում նաև օտարանալ բայը, որի լրացումը հիմնականում անձի անուն կամ անձ ցույց տվող բառ է լինում։ Ընդ որում, տրական հոլովով ձևավորված լրացումը հանգման, իսկ բացառականով ձևավորվածը անջատման, հեռացման իմաստ է դրսևորում։

Օրինակներ՝ «Եվ իրար երբեք չեն օտարանում» (ՀՍ, ԵԺ, հ. 2, էջ 392), «Օտարացել են միմյանց» (Գ, 1979, № 2, էջ 19)։ Գործածական են նաև օտարանալ բարեկամին (ընկերոջը, ծնողին, ղեկավարին, ուսուցչին, մարդկանց), օտարանալ բարեկամից (ընկերոջից, ծնողից, ղեկավարից, ուսուցչից, մարդկանցից) և այլ կապակցություններ։

Օտարանալ-ի համար թեև ավելի բնորոշ է բացառականով խնդրառությունը, սակայն տրականով ձևավորված լրացումները ևս տարածված են գրական լեզվում։

Մեկից ավելի հոլովներով ձևավորված խնդրառություն է ցուցաբերում նաև կառչել բայը, որի լրացումները կարող են արտահայտվել թե՛ տրականով, թե՛ բացառականով, թե՛ գործիականով։ Տրականի և բացառականի դեպքում հիմնականում հանգման հարաբերություն է դրսևորվում, սակայն բացառական հոլովով դրված լրացումը սոսկ հանգում չի արտահայտում, նրանով հանգման իմաստի հետ դրսևորվում են նաև ամուր կառչելու, կպչելու, բռնելու, պոկ չգալու, բաց չթողնելու և այլ նրբերանգներ։ Այսպես՝ «Ու նա ավելի ամուր կառչեց ամուսնուց» (ՊՋ, Ա6, էջ 110), «Պրկված երակներով նա կառչել էր ժայռից» (Գ, 1979, № 12, էջ 22), «Եվ նա երեխայի պես բազրիքից կառչած էր իջնում» (Գ, 1978, № 11, էջ 41)։ Բերված օրինակներում բացառական հոլովով ձևավորված լրացումները հանգման նշանակությունը արտահայտում են լրացուցիչ նրբերանգներով, ամուր կպչելու, բռնելու, պոկ չգալու իմաստների համատեղումով (իհարկե, ոչ շատ ընդգծված ու շեշտված)։ Հարկ է նշել, որ կառչել բայի լրացման գործառույթով ավելի շատ իր, քան անձ ցույց տվող բառեր են կիրառվում։ Ընդ որում, իբրև լրացում, կարող են կիրառվել թե՛ թանձրացական, թե՛ վերացական գոյականները, իհարկե, վերջինների նկատմամբ առաջինների որոշակի գերազանցությամբ։ Վերացական իմաստ ունեցողներից առավել հաճախակի են հանդիպում հատկապես միտք, գաղափար, քաղաքականություն, պատրանք, ակնարք. տեսակետ և այլ գոյականներ, այն էլ ավելի շատ բացառական, քան տրական հոլովով։

Կառչել բայի լրացումների ձևավորմանը մասնակցում է նաև գործիական հոլովը, որով հիմնականում արտահայտվում է միջոցի հարաբերություն, մի բան, որ ընդհանրապես հատուկ է այդ հոլովին։ Ընդ որում, միևնույն նախադասության մեջ երբեմն միաժամանակ կարող են հանդես գալ կառչել բայի մեկից ավելի լրացումներ՝ դրսևորված տարբեր հոլովներով՝ գործիականով ու բացառականով (կամ տրականով)՝ արտահայտելով համապատասխան նշանակություններ։ Այսպես՝ «Մինչ պատրաստ ենք կառչել ատամներով ուրախու-

թյան անցնող ակնթարթից թեկուզ» (ՊՍ, եժ, հ. 1, էջ 24), «Նրա միակ հենարանը մնացել էին կողպեքից վեր ելնող եղեգները, որոնցից կառչել էր երկու ձեռքերով» (ՎԱ, ՍԱ, էջ 72)։ Բացառական հոլովաձևերով արտահայտվում է հանգման (դարձյալ ընդգծված, շեշտված), գործիականով՝ միջոցի հարաբերություն։

Մեկից ավելի հոլովներով արտահայտված խնդրառություն ունեն նաև հպել, հպվել, փարվել, փաթաթվել և այլ բայեր։ Սրանց լրացումները կարող են ձևավորվել թե՛ տրական և թե՛ գործիական հոլովաձևերով՝ համապատասխանաբար արտահայտելով հանգման և միջոցի (նաև ձևի) հարաբերություններ։ Ընդ որում, տրականով կիրառված լրացումը կարող է թե՛ իր, թե՛ անձ ցույց տալ առանց խտրության, իսկ գործիականով ձևավորված լրացումը՝ հիմնականում իր (ոչ անձ)։ Այսպես՝ «Մի պահ փորձում է հպվել նրա առեղծվածային ու հմայող զաղտնիքներին» (Գ, 1979, № 12, էջ 69), «Ու շրթերը հպելով ականջին. ՀՀՆՉԱՑ» (ՍԳ, 1982, № 12, էջ 48), «Հերթով եկեք այդպես ու փարվեք ինձ» (ՀՍ, եժ, հ. 2, էջ 207), «Եվ ուզում էր կրկին փարվել հայրենիքին» (ՊՍ, եժ, հ. 4, էջ 55)։ Բերված նախադասությունների մեջ տրականով ձևավորված լրացումները հանգման խնդրի պաշտոն են կատարում՝ առանց լրացուցիչ որևէ հարաբերություն արտահայտելու։

Մատնանշված բայերի գործիական հոլովով ձևավորված լրացումները միջոցի հարաբերությունից բացի, կարող են արտահայտել նաև տեղի, հանգման, ձևի և այլ հարաբերություններ, ավելի ճիշտ ասած՝ միջոցի նշանակության հետ երբեմն համատեղվում են հանգման, տեղի և այլ հարաբերություններ։ Այսպես՝ «Նա հայացքով հպվել է մի անիմանալի գաղտնիքի» (Գ, 1979, № 10, էջ 39), «Եվ իր տաք շրթունքներով հպվեց նրա շրթունքներին» (ԱԿՕ, հ. 2, էջ 27), «Փարվեց Ավգուստինի վզով» (Ն. տ.), «Վիկտորյան փարվել էր նրա պարանոցին» (Ն. տ., էջ 155)։ Հարկ է նկատել, որ հայացքով հպվել և շրթունքներով հպվել կապակցությունների մեջ գործիականով արտահայտված լրացումները թեև միջոցի խնդրի պաշտոն են կատարում, սակայն որոշ չափով համատեղում են նաև ձևի նշանակություն։ Այդ պատճառով էլ կարելի է տալ թե՛ ինչո՞վ, թե՛ ինչպե՞ս (հպվել) հարցը։ Իշխողը, իհարկե, խնդրային հարաբերությունն է, պարագայականը սոսկ ուղեկցում է նրան։ Փարվել վզով և փարվել պարանոցով կապակցություններում միջոցի հարաբերություն չի դրսևորվում, այնտեղ համատեղվում են հանգման ու տեղի իմաստներ։ Այդ է պատճառը, որ կարելի է տալ թե՛ որտեղի՞ն (որտեղո՞վ) և թե՛ ինչի՞ն (փարվել) հարցը։ Փարվել որտեղին (որտեղով) վզին (պարանոցով), փարվել ինչին վզով (պարանոցով)։ Առաջին դեպքում իշխում է տեղի իմաստը, երկրորդում՝ հանգման։ Սակայն տեղի հարաբերության հետ զգացվում է նաև հանգման, իսկ հանգման նշանակության հետ՝ տեղի նշանակություն։ Այսինքն՝ տեղն ու հանգումը որոշ չափով համատեղվում են նշված կապակցություններում։

Ինչպես արդեն նշվել է, որոշ բայերի առավել հատկանշական է կապային, քան հոլովական խնդրառությունը։ Իհարկե, առանձին դեպքերում դրանց լրացումները կարող են նաև հոլովական ձևավորում ստանալ, սակայն դա այնքան տիպական ու բնորոշ չէ, որքան կապայինը։ Այդ պատճառով էլ այդպիսիք մտցվում են կապական և ոչ թե հոլովական ու կապական խնդրառություն ունեցող բայերի շարքը։ Կապային խնդրառությունը առավել բնորոշ է բարեկամություն, թշնամություն, պսակադրություն, հաշտություն, խորհրդակցում, համագործակցում, դաշնակցում և այլ իմաստ արտահայտող՝ բարեկամանալ, թշնամանալ, պսակվել, ամուսնանալ, նշանվել, խորհրդակցել, դաշնակցել, գործակցել, համագործակցել, հաշտվել և այլ բայերի։

Մատնացույց արված բայերը բնութագրվում են մի քանի ընդհանուր հատկանիշներով։ Դրանք են՝ ա) դրսևորում են միայն մարդուն բնորոշ գործողություններ, այսինքն՝ այնպիսի գործողություններ, որոնք կարող են իրացվել միայն բանական էակի՝ մարդու կողմից, բ) դրանց լրացման դերով կիրառվում են անձ ցույց տվող բառեր, գ) լրացումները հիմնականում հանգման խնդրի պաշտոն են կատարում՝ համատեղելով փոխադարձ հարաբերության

նշանակություն, դ) լրացումների ձևավորմանը մասնակցում են նույն բնույթի կապեր (ակտիվություն է հանդես բերում հատկապես հետ-ը)։

Կապային խնդրառություն ունեցող բայերի խնդիր-լրացումները փոխադարձ կապի մեջ են նախադասության ենթակաների հետ։ Այսպես՝ «Արամը ամուսնացավ Հասմիկի հետ» կապակցության մեջ Արամի՝ Հասմիկի հետ ամուսնանալուց ինքնին բխում է Հասմիկի՝ Արամի հետ ամուսնանալը, այսինքն՝ ամուսնանալը տարածվում է ոչ միայն ենթակայի՝ Արամի, այլև խնդրի՝ Հասմիկի վրա։ Նվ թեև փոխադարձ կապի ու հարաբերության մեջ են ենթական ու խնդիրը, սակայն քերականորեն դրանք հավասարազոր չեն։ Առաջին պլանի վրա է դրվում ենթակայի գործողությունը՝ Արամի ամուսնությունը և իբրև դրա հետևանք երևան է գալիս նաև Հասմիկի ամուսնանալը Արամի հետ։ Տրամաբանական շեշտը դրվում է ենթակայի վրա, որը այս դեպքում առաջնային է, և ոչ թե խնդրի։ Կապային խնդրառություն հանդես բերող ամուսնանալ, նշանվել, պսակվել և այլ բայերի լրացումները ձևավորվում են անձ ցույց տվող բառ+հետ կապ։ Օրինակներ՝ «Դու ուրախ չե՞ս, որ իմ քույրը ամուսնացել է քո եղբոր հետ» (ՐԵԺ, հ. 7, էջ 95), «Լուսինյանի հետ ամուսնանում է բանաստեղծուհի Վիկտորյա Մելիքյանը» (ԱԿՕ, հ. 2, էջ 163), «Ասում են Վիկտորյան արդեն նշանվել է Միրզոյանի հետ» (Ն. տ., էջ 8), «Այո, այժմ մենք միմյանց հետ պիտի պսակվենք» (ՆԴԵ, հ. 1, էջ 469)։

Բարեկամանալ և թշնամանալ բայերի համար օրինաչափական է կապային խնդրառությունը, այսինքն այդ բայերը ստանում են կապով ու կապվող բառով ձևավորված լրացումներ[6]։ Այսպես՝ «Նվ այդ է պատճառը, որ բարեկամացել է կաթողիկոսի հետ» (ՐԵԺ, հ. 3, էջ 262), «Պետք է բարեկամանալ հայերի և վրացիների հետ» (ՍԽ, ՄԱ, էջ 248)։

Կապային խնդրառություն ցուցաբերում են նաև խորհրդակցել, գործակցել, համագործակցել և այլ բայեր, որոնց լրացումը ձևավորվում է սեռական հոլովի ու հետ կապի զուգորդմամբ՝ արտահայտելով հանգման հարաբերություն՝ փոխադարձ կապվածության նշանակության համատեղումով։ Օրինակ՝ «Նվ նա խորհրդակցել էր բարեկամի հետ» (Գ, 1979, N 6, էջ 25), «Հիմա նա որոշել էր այդ առթիվ խորհրդակցել եղբոր հետ» (ԱՍ, ՈՎՄ, էջ 202), «Վերջին տարիներին համագործակցում եմ այնպիսի դիրիժորի հետ, ինչպիսին Դավիթ Խանջյանն է» (Գ, 1979, № 12, էջ 4)։ Խորհրդակցել-ը ունի մտածական բայերին բնորոշ հատկանիշ, որը և հնարավորություն է ընձեռում ստանալու նաև վերաբերության խնդիր՝ արտահայտված սեռական հոլովի և մասին (շուրջ, վերաբերյալ) կապերի զուգորդմամբ։ Այդ դեպքում բայի հանգման խնդիր-լրացումը երբեմն համատեղում է ոչ միայն փոխադարձ կապվածության, այլ նաև միասնության նշանակություն։ Դեռ ավելին, երբեմն առաջնային պլան է մղվում միասնության հարաբերությունը և աղոտանում, գուցե և չեզոքանում է հանգման նշանակությունը։ Այսպես՝ «Վանահոր հետ խորհրդակցեցինք մատենադարանի փրկության մասին» (ԱԿՕ, հ. 2, էջ 462), «Նվ ցած ձայնով ինչ-որ հարցի մասին սկսեց խորհրդակցել հետը» (ՎԱ, ՍԱ, էջ 380)։ Առաջին օրինակում «վանահոր հետ» կապակցությամբ ավելի շատ միասնություն, քան հանգման հարաբերություն է արտահայտվում՝ վանահոր հետ (միասին) խորհրդակցել..., երկրորդում «խորհրդակցել հետը» կապակցության մեջ ավելի շատ իշխում է հանգման, քան միասնության հարաբերությունը։ Եթե տրոհենք, ավելի ճիշտ երկատենք նախադասությունները և քննենք անջատաբար, առանձին-առանձին, ինչպես՝ խորհրդակցել վանահոր հետ, խորհրդակցել հետը, խորհրդակցել... փրկության մասին, խորհրդակցել... հարցի մասին, ապա առաջին մասով կարտահայտվի հանգման հարաբերություն, երկրորդով՝ վերաբերության։ Իսկ ամբողջը միասին առնելու դեպ-

6 Կան մասնակի դեպքեր, երբ բարեկամանալ և թշնամանալ բայերի լրացումը ձևավորվում է տրականով («Ես ուզում եմ բարեկամանալ փախստականներին, հյուր լինել նրանց», ՍԽ, ՄՍ, էջ 8), «Շատերը սկսեցին նախանձել, իսկ նախանձի հետ թշնամանալ նրան» (ՆԴԵ, հ. 1, էջ 145)։ Տրականով խնդրառությունը այժմ չեղում է գրական նորմայից, հետևաբար և՝ ոչ հանձնարարելի։

քում հարաբերությունը որոշ չափով կարող է փոխվել, և հանգման նշանակության հետ կարող է երևան գալ նաև միասնության հարաբերությունը։ Այստեղ որոշ դեր են կատարում նախադասության կառուցվածքը, հաղորդման նպատակը և արտալեզվական այլևայլ գործոններ։ Կապային խնդրառությունը բնորոշ է նաև դաշնակցել բային, որի լրացումը ձևավորվում է սեռականի և հետ կապի զուգորդմամբ՝ արտահայտելով հանգման հարաբերություն՝ փոխադարձ կապվածության համատեղումով։ Օրինակ՝ «Զմոռանաք, որ դուք ինձ ստիպեցիք նրանց հետ դաշնակցել» (ՊԶ, Ա6, էջ 280), «Վերջինս մի քանի ամիս առաջ եկավ խնդրելու իրան՝ միանալ, դաշնակցել ցանկացող իշխանների հետ» (ՐԵԺ, հ. 3, էջ 373)[7]։

Հաշտվել բայը ևս ստանում է կապով արտահայտված լրացում։ Հաշտվել-ի լրացման գործառույթով կարող են հանդես գալ թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող բառեր։ Երբ կիրառվում է իր հիմնական՝ հաշտության գալ, համաձայնության գալ, հաշտություն կնքել իմաստներով, մեծ մասամբ անձ ցույց տրվող լրացում է ստանում, իսկ համակերպվել (մի բանի) նշանակությամբ գործածվելու դեպքում լրացումը հիմնականում իր (ոչ անձ) է ցույց տալիս։ Այսպես՝ «Հաշտվիր նախարարների հետ» (ՊԶ, Ա6, էջ 85), «Թագավորը դեռ նոր էր հաշտվել յուր հորեղբոր որդի Աշոտ բռնավորի հետ» (ՐԵԺ, հ. 3, էջ 10), «Ներսեսն արդեն հաշտվել էր իր ճակատագրի հետ» (ՊԶ, Ա6, էջ 8), «Գառնիում կարծում էի, թե հաշտվել եմ արդեն իմ վիճակի հետ» (ՐԵԺ, հ. 3 էջ 302)։

Մերձեցման հարաբերություն արտահայտող բայերի յուրաքանչյուր մանրախումբ ընդհանուր հատկանիշների հետ միասին ցուցաբերում է որոշ առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են ինչպես բայիմաստային նրբերանգների, այնպես էլ դրանցով պայմանավորված խնդիր-լրացումների ձևավորման և լրացումների արտահայտած հարաբերությունների մեջ։

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՍ, ՈՎՄ—Անահիտ Սեկոյան, Ոսկե վազերի մեջ, Երևան, 1979։
Ա40—Անտոն Կղնունի, Օտարականը, հ. 2, Երևան, 1977։
Գ—Գարուն (ամսագիր)։
ԴՍԹ—Գարեգին Սևունց, Թեհրան, Երևան, 1973։
ՀԹԵ—Հովհաննես Թումանյան, Երկեր, Երևան, 1973։
ՀՍ, ԵԺ—Համո Սահյան, Երկերի ժողովածու, Երևան, 1952։
ՆԴԵ—Նար-Դոս, Երկեր, Երևան, 1955։
ՆԶՀ—Նաիրի Զարյան, Հացավան, Երևան, 1955։
ՊԶ, Ա6—Պերճ Զեյթունցյան, Արշակ Երկրորդ, Երևան, 1977։
ՊՍ, ԵԺ—Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, Երևան, 1972—1976։
ՍԱ, ԺԳՀ—Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981։
ՍԳ—Սովետական գրականություն (ամսագիր)։
ՍԶ, ԵԺ—Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու, Երևան, 1978։
Սե, ՄՍ—Սերո Խանզադյան, Մխիթար սպարապետ, Երևան, 1963։
ՍՀ—Սովետական Հայաստան (օրաթերթ)։
ՎԱ, ՍԱ—Վախթանգ Անանյան, Սևանի ափին, Երևան, 1961։
ՐԵԺ—Ռաֆֆի, Երկերի ժողովածու, Երևան, 1956։

---

7 Հազվադեպ դաշնակցել բայի լրացումը ձևավորվում է տրականով, հատկապես, երբ դրսևորում է միանալու իմաստ։ Այսպես՝ դաշնակցել հայերին (ռուսներին)։ Սակայն նշված բայի համար առավել բնութագրական ու բնորոշ է կապային խնդրառությունը և այդ պատճառով այն քննության է առնվում կապային խնդրառություն ունեցող բայերի շարքում։

# ОБ УПРАВЛЕНИИ ГЛАГОЛОВ, ВЫРАЖАЮЩИХ ОТНОШЕНИЕ СБЛИЖЕНИЯ

АМАЯК ОГАНЯН

**Резюме**

В составе глаголов современного армянского языка значительное место занимают глаголы, выражающие отношение сближения. Эти глаголы неоднородны по образованию дополнений. Управление некоторых из них в основном осуществляется при помощи падежных форм. Ряд глаголов требует предложного управления, а для некоторых из них характерно как падежное, так и предложное управление. Глаголы, имеющие предложное управление, выражают действие, характерное только для человека, в роли дополнения для них выступают слова со значением лица, дополнения в значительной степени совмещают значение взаимоотношения, в их формировании активное участие проявляет предлог հետ (с, вместе).